## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**6 օգոստոսի 2024 թվականի N 296-Ա**

**«ՍԻՍԻԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ ՎԱՐԴՈՒՇ ԹԵՎԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի դիմումը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Անիկ Գրիգորյանին 2024 թվականի օգոստոսի 12-ից 23-ը ներառյալ տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված մասը՝ 10 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ընկերության բուժական գծով տեղակալ Վարդուշ Թևանյանին:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2024թ. օգոստոսի 6
ք. Կապան